

տողերս, զորոնք կը գրէր երբ տակաւին չէր բաժնուած Հոռոմէն.

«Եւ այլ բազում իրս, բանս եւ գործս, չէնք եւ կարգ ու սահմանք տեսաք եւ լուաք աշխարհն այն. զոր սակաւս ի բազմաց գրեցաք բազում աշխատութեամբ, սիրով ընթերցողացդ եւ յուսով ունկնդրողաց: Բայց ազաչեմ մի հեղգալ եւ մի ծանծրանալ ձեզ՝ ապախտ առնելով զերկս վաստակոց իմոց. զոր երբեմն ի կէմին, երբեմն ի վերայ գրատի, երբեմն յիջեւանս եւ խաներն նստեալ գրէի. այլ ուտէին, ըմպէին եւ այլ յիրս գուարնանային. եւ ես հոգ տարեալ այսմ իրի՝ ջանայի ի լրումն հանել գառաջարկեալ գիրս. զի յօգուտ եւ շահաւէտ լիցի ուխտաւորաց եւ շրջող անձանց» (175):

Այս յուշագրութիւնները ապա վերագարծին հայրենիք ենթարկած է նոր խմբագրութեան, յետսահայեաց ակնարկով մը: Ուղեգրական մասը խմբագրուած է 1619—1625 տարիներու մէջ, երբ Լեհահայոց կեանքը չէր յուզուած դեռ ներքին դժտութիւններով: Հետաքրքրական է հետեւեալ դէպքը, զոր մուծած է ուղեգրական ծանօթութիւններու շարքին մէջ օրուան տպաւորութեան տակ: Սիւմէոն նկարագրելով Հոռոմ տեսածները (1611—1612 տարւոյն) կը գրէ յանկարծ. «Յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս կայսրն քրիստոնէից՝ ալաման, բարի մահուամբ, Մաթէոս անուն» (138): Ոտքը Մաթիաս կայսեր մասին է, որ